

Հայրենի են «Լավագույն գիտական աշխատանք» ամենամյա մրցույթի հաղթողները

Հունիսի 16-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Լավագույն գիտական աշխատանք» ամենամյա մրցույթի հաղթողների մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը: Մրցույթը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ-ն և Ռուսաստանի հայերի միությունը: Մրցույթն իրականացրել է ՀՀ ԳԱԱ Գիտության զարգացման հիմնադրամը: Մրցույթային ֆուդը 2010 թ. կազմել է 9 միլիոն 250 հազար դրամ, որը բաշխվել է 5 անվանակարգերի միջև: Առաջին տեղի մրցանակը կազմում է 1,5 միլիոն դրամ, 2-րդ տեղինը՝ 350 հազար դրամ: Երկրորդ տեղի մրցանակի գումարը Ռուսաստանի հայերի միությունը լրացուցիչ փորձադրել է իր հիմնադրամի 10-ամյակի առթիվ:

Հասարակական գիտություններ անվանակարգում առաջին տեղը կիսեցին Վահան Բայրությունյանը (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)՝ «Քրոնիկ, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության (լուսի ներքո)» մենագրության համար և Տիգրան Թորոսյանը (ՀՀ ԱԺ պատգամավոր)՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում» մենագրության համար: Երկրորդ տեղը զբաղեցրեց Սեդա Գասպարյանը (ԵՊՀ)՝ «Գեղարվեստական համեմատությունը որպես լեզվաբանաստեղծական հնար» մենագրության համար:

Հայագիտություն անվանակարգում առաջին տեղը զբաղեցրեց Արսեն Բորոխյանը (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)՝ «Հաղորդակցությունը և փոխանակությունը Կովկասի ու Տավրոսի միջև ընկած լեռնաշխարհում, մ.թ.ա. մոտ 2500-1500 թթ.» մենագրության համար: Երկրորդ տեղը զբաղեցրեց Մեղուծան Հարությունյանը (ԵՊՀ)՝ «Թարգմանելու արվեստը» մենագրության համար:

Բնական գիտություններ անվանակարգում առաջին տեղը կիսեցին Շիրազ Սարգսյանը՝ համահեղինակների հետ (ԵՊՀ) «Է վիտամինի ջուր + դիմախիտլոֆոսֆիդ և ջուր + դիմախիտլոֆոսֆիդ պարունակող շրջված միջուկներում կապվելու ուսումնասիրությունը սպեկտրոֆոտոչափական եղանակով» հոդվածների շարքի համար և Արմեն Թադևոսյանը՝ համահեղինակների հետ (ԵՊՀ) «Բակտերիաների թաղանթների գործառնական ակտիվությունը և դրա կարգավորումը» հոդվածների

շարքի համար: Երկրորդ տեղը զբաղեցրեց Վիգեն Թուխույանը՝ համահեղինակների հետ (ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Մեջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ)՝ « α , β -Դեհիդրոֆենիլալանինի խոլինային էսթերներ, մարդու աջտիվիլոլինէսթերազի և բուրբիլոլինէսթերազի դարձելի արգելակիչների նոր դաս» հոդվածների շարքի համար:

Ճշգրիտ գիտություններ անվանակարգում առաջին տեղը զբաղեցրեց Դավիթ Սարգսյանը՝ համահեղինակների հետ (ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ)՝ «Օպտիկական պրոցեսները սուբմիկրոնային հաստությամբ ատոմական գոլորշիներում և դրանց կիրառությունները» հոդվածների և թեզիսների շարքի համար: Երկրորդ տեղը զբաղեցրեց Մարտին Գրիգորյանը՝ համահեղինակների հետ (ԵՊՀ)՝ «Ուոլշի համակարգի ուժեղացված L1-greedy հատկության մասին» հոդվածների համար:

Ինֆորմատիկա և տեխնիկական գիտություններ անվանակարգում առաջին տեղը կիսեցին ժող. ֆանոսյանը՝ համահեղինակների հետ (ՀՀ ԳԱԱ)՝ «Ալմաստաման ածխածնային թաղանթների ստացման եղանակ և սարք» ԱՄՆ արտոնագրի համար և Վոլոդյա Երիցյանը՝ համահեղինակների հետ «Վինիլացետատի ստացման եղանակ», ՀՀ արտոնագրի համար: Երկրորդ տեղը զբաղեցրեց Ստեփան Մեսչյանը (ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ)՝ «Կավային գետնահողերի հոսքաբանության փորձարարական հիմքերը» մենագրության համար:

Արմեն Թախարաջյան - 100

Հունիսի 10-11-ին Սանկտ Պետերբուրգի բուսաբանության ինստիտուտում գումարվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված համաշխարհային մեծության գիտնական, բուսաբան, կենսաբան և էվոլյուցիոնիստ Արմեն Թախարաջյանի 100-ամյակին:

Ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վասիլի Յարմիչկոն նշեց, որ ներկա գիտաժողովը հարգանքի տուրք է մեծագույն գիտնականի վաստակին և Արմեն Թախարաջյանի չխամրող հիշատակին: Գիտաժողովում ներկայացված գեղեցիկները հավաստում են, որ Արմեն Թախարաջյանի թողած գիտական միջոցների ժառանգությունը անսպառ աղբյուր է ինչպես ներկա, այնպես էլ ապագայի բուսաբանների, կենսաբանների, բնագետների համար:



Գիտաժողովի մասնակիցները այցելեցին Վասիլյան կղզում գտնվող հայկական գերեզմանոց և ծաղիկներ դրեցին աշխարհառչակ գիտնականի շիրմին:

20-րդ դարի մեծագույն բուսաբանը

ՏԵՂԵԿԱԼԵ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Լևոնի Թախարաջյանը իր գիտական գործունեության 75 տարիների ընթացքում նշանակալի ազդեցություն է թողել բուսաբանության զարգացման վրա, սկզբում Հայաստանում և ապա ամբողջ աշխարհում:

- Նա անցել է ստեղծագործական բեղմնավոր ուղի՝
- 1936-1944 թթ. Երևանի պետական համալսարանի մորֆոլոգիայի և կարգաբանության ամբիոնի վարիչ,
 - 1944-1948 թթ. ՀԳԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն,
 - 1949-1961 թթ. Լենինգրադի պետական համալսարանի պրոֆեսոր,
 - 1951-1954 թթ. Լենինգրադի պետական համալսարանի կենսաֆիզիոլոգիական ֆակուլտետի դեկան,
 - 1954-1988 թթ. Լենինգրադի Վ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի պալեոբուսաբանության բաժնի վարիչ,
 - 1963-1988 թթ. Լենինգրադի Վ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի ֆլորայի, կարգաբանության և էվոլյուցիայի բաժնի վարիչ,
 - 1977-1986 թթ. Վ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն:

Ա. Թախարաջյանի գիտական աշխատանքների ցուցակն ընդգրկում է ավելի քան 350 անվանում: Նրա գրչին են պատկանում ավելի քան 15 ֆունդամենտալ մենագրություններ, ինչպիսին են, օրինակ «Система высших растений» (1950 թ.), վերահրատարակվել է անգլերեն, չեխերեն և չինարեն լեզուներով, «Вопросы эволюционной морфологии растений» (1954 թ. անգլերեն լեզվով վերահրատարակվել է Վաշինգտոնում), «Происхождение покрытосеменных растений» (1954թ. վերահրատարակվել է անգլերեն լեզվով Վաշինգտոնում), «Происхождение и расселение цветковых растений» (1970թ.), «Система и филогения цветковых растений» (1968թ.), մենագրությունը արժանացել է ՍՄՀՄ գիտությունների ակադեմիայի Վ. Կոմարովի անվան բարձրագույն մրցանակի, իսկ «Флористические области Земли» (1978թ.) մենագրությունը արժանացել է ՍՄՀՄ պետական մրցանակի:

Ա. Թախարաջյանի խմբագրությամբ հրատարակվել են «Красная книга СССР», ինչպես նաև «Жизнь растений» Է «Флора Армении» բազմափափա տոր հրատարակությունները, բազմաթիվ տեղեկագրեր՝ «Сравнительная эмбриология цветковых растений», «Сравнительная анатомия семян», «Полезные растения СССР», «Числа хромосом цветковых растений флоры СССР» և ուրիշներ:

Մեծ է նաև Ա. Թախարաջյանի գիտակազմակերպական գործունեությունը: Նա հանդիսացել է «Ботанический журнал» ամսագրի գլխավոր խմբագիր, Հայկական աշխարհագրական ընկերության պրեզիդենտ, Համախորհրդային բուսաբանական ընկերության պրեզիդենտ, Լոնդոնի Լիննեյի ընկերության արտասահմանյան անդամ, Հնդկաստանի պալեոբուսաբանական ընկերության պատվավոր անդամ, ԱՄՆ-ի, Նորվեգիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի ակադեմիաների արտասահմանյան անդամ, «Լեոպոլդինա» գերմանական բնագիտության ակադեմիայի անդամ և այլն:

Գիտնականն արժանացել է բազմաթիվ մրցանակների, պարգևների և շնորհների, այդ թվում՝

- 1958 թ. «Լենինգրադի 250-ամյակի հիշատակին» հոբելյանական շքանշան
- 1970 թ. «Անձնվեր աշխատանք» հոբելյանական շքանշան
- 1975 թ. «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշան
- 1981 թ. ՍՄՀՄ-ի պետական մրցանակ
- 1991 թ. Ռոբերտ Ալլերտոնի անվան մրցանակ
- 2001 թ. Արձաթե շքանշան (Սիցիլիա)



Կկարարվեն Իրանի հայկական հուշարձանների չափագրումներ

Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող կազմակերպության գիտական արշավախումբը Թեհրանում է և Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի հետ համատեղ՝ Շեռիկ Ավետյանի ղեկավարած մասնագիտական խմբի մասնակցությամբ, պատրաստվում է հայկական եկեղեցիների, հուշակոթողների ու տապանաքարերի վի-

մագրերի ընթերցումներ և չափագրումներ իրականացնել: Արշավախումբն այցելելու է Իրանի երբեմնի հայախոծ բնակավայրեր, ինչպես նաև Նոր Ջուղա:

Ատրպատական նահանգի՝ Նախապես ծրագրված ուսումնասիրությունն այս անգամ չի իրականացվի ժամանակի սղության պատճառով, սակայն հաջորդ հետազոտությունն ամբողջությամբ նվիրված կլինի Ատրպատականի հուշարձաններին, տեղեկացնում է «Ալիքը»:

Ավելի հին, քան Գիգայի բուրգը

Արտասահմանյան լրատվամիջոցները տեղեկություն տարածեցին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում հայտնաբերված գտածոյի մասին, որի ռադիոածխածնային հետազոտությունները կատարված ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի լաբորատորիաներում, ցույց տվեցին, որ գտածոն 5.500 տարեկան է: Խոսքը վերաբերում է կաշվից պատրաստված, հավանաբար, կանացի կոշիկին, որը հիանալի պահպանվել է ոչխարի գոմաղբի շնորհիվ, որով ծածկված է եղել կոշիկը:

Գիտական աշխատանքների ղեկավար և պեղումներին իրականացնող խմբի պետի տեղակալ (Միացյալ Նահանգների Կորկ համալսարանից) Ռոն Պինհասին հայտարարեց, որ համապատասխան հետազոտությունները թույլ տվեցին արժանագրել համաշխարհային նոր ռեկորդ: Հայաստանում պեղված կոշիկը հազար տարով ավելի հին է, քան Կահիրեի մոտակայքում գտնվող Գիգայի բուրգը:

Կոշիկի հետ միասին հնագետները հայտնաբերել են կոտրված կուժ և այծի կոտորված: Գիտնականը գտնում է, որ վայրցձորյան քարայրը անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել, քանի որ այնտեղ կարող են գտնվել ուրիշ հազվագյուտ նմուշներ: Ի դեպ, նշեց, որ քարայրում գտնվել են մի քանի մանկական կմախքներ, որոնց տարիքը, Ռոն Պինհասի կարծիքով, 5.000 տարի է: (Կարդացեք 5-րդ էջում)

(Սկզբը՝ 1-ին էջում)


Երևի թե իմ հայրենակիցների գերակշռող մեծամասնությունը չի պատկերացնում, թե բուսաբանական տեսակետից ինչպիսի հետաքրքիր երևույթ է ապրում ինքը։ Այս բնական հողում աճում է ամբողջ Կովկասում գոյություն ունեցող բուսատեսակների կեսից ավելին, և երեք անգամ ավելի, քան Մերձկասկան համրապետություններում միասին վերցրած։ Առաջին անգամ Հայաստան այցելած մասնագետները մեր բուսական աշխարհը (ֆլորան) տառաջիկորեն ապշեցնում է տեսակների և ձևերի հարստությամբ, բազմազանությամբ և հատկապես կուլտուրական բույսերի վայրի աճող նախնիների և դրանց ցեղակիցների առատությամբ։ Վայրի ճորենի, տարեկանի, գարու, սիսեռի, ոսպի տեսակները, բազրկի, խնձորենու բազում տեսակները, վայրի տանձենու 39 տեսակները, տարբեր հատապտուղներ և այլ բուսատեսակներ չափազանց արժեքավոր աղբյուր են սելեկցիոն աշխատանքների և նոր տե-

տացովների մոլեկուլյար բուսաբանության և ժամանակակից այլ ուղղությունների նորագույն տվյալները։

Գիտական բազմաթիվ արշավախմբերի ընթացքում Ա. Թախտաջյանի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում Հայաստանի և Անդրկովկասի բուսականությունն էր, որին նա միջին և մի շարք կարևոր ուսումնասիրություններ։ Հատկապես պետք է նշել նրա «Հայաստանի բուսաաշխարհագրական ակնարկ» գիրքը, որը թեև հրատարակվել է 1941 թվականին, սակայն մինչև օրս էլ կարևոր տեղեկատու է Հայաստանի բուսականության տեսակների մասին։ Արդեն այն ժամանակ, ըստ առանձնահատուկության և էնդեմիկների առկայության, վերլուծելով Հայաստանում բույսերի տեսակների ցեղերը և այլ խմբերի կազմն ու տարածվածությունը, Թախտաջյանը հիմնավորեց և առանձնացրեց Հայաստանի ֆլորիստիկական տարբեր շրջանները։ Հետագայում, շրջապայելով տարբեր մայրցամաքներում, երկրներում և արևադարձային կղզիներում, ուսումնասիրելով վիթխարի գրականություն, Արմեն Թախտաջյանը մոլորակի բուսաբանների համար ստեղծեց «Երևրի ֆլորիստիկական մարզերը» չափազանց կարևոր աշխատությունը, որի համար 1981 թվականին նրան շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ։ Նա ձևակերպեց ֆիտոխորոնոմիայի (այդպես նա կոչեց ուսմունքը ֆիտոխորոնոմիայի մասին) հիմնական սկզբունքը։

ԱՐՄԵՆ ԹԱՄՏԱՋՅԱՆԸ ԵՎ ԲՈՒՅՄԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

սակներ ստանալու համար։ ԶԷ՝ որ վայրի աճող տեսակները ավելի լավ են հարմարված տեղական պայմաններին, քան կուլտուրական բույսերը։ Նրանք դիմացկուն են հիվանդությունների, երաշտի, հողի աղուտացման և այլ վնասակար երևույթների նկատմամբ։ Հարկ է ավելացնել նաև, որ մեզ մոտ վայրի վիճակում իսնդիպում են շատ մեծ քանակությամբ սքանչելի դեկորատիվ բուսատեսակներ, ինչպես հիբիսկները, թրաշուշանները, շուշանները, խոլոքները, տարբեր ձևով ծաղիկներ, ծերեփուկներ, անեմոններ և այլն։ Կան շատ արժեքավոր դեկորատիվ, մերկատ, դաբաղող, կերային և ուրիշ օգտակար բույսեր։ Ահա այս ամբողջ հարստությամբ էլ հենց զբաղվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժինը։ Ի դեպ, չմոռանալ նշել, որ այս ինստիտուտի առաջին տնօրենը և հիշատակված բաժնի հիմնադիրը եղել է ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը։



Ավելի ուշ՝ 1986 թվականին, այդ գիրքը, ֆիտոխորոնոմիայի քարտեզներով և առավել մշակված լույս տեսավ անգլերեն՝ կալիֆոռնիական համալսարանի հրատարակչության կողմից։ 20-րդ դարի խոշորագույն բուսաբաններից մեկը՝ Լեոյարդ Ստեփենյանը, այսպես գնահատեց այդ գիրքը. «Աշխարհի բույսերի այս դասակարգումը լավագույնն է մինչև հիմա եղածներից»։

Ներ 40-ական թվականներին, երբ աշխատում էր Երևանում, Արմեն Թախտաջյանը միտք հղացավ հիմնարար և համրագիտարանային ուսումնասիրություն ստեղծել Հայաստանում աճող բոլոր բուսատեսակների մասին, այսինքն՝ Հայաստանի ֆլորայի մասին։ Բնականաբար, այն ժամանակ ոչ ոք չէր ենթադրում, թե Հայաստանի ֆլորան այդքան հարուստ է և կպահանջի բազում և բազում հատորներ։ Առաջին հատորը ամբողջությամբ գրեց Ա. Թախտաջյանը, այն լույս տեսավ 1954-ին։ Միաժամանակ նա մեծ եռանդով կարգաբանների կադրեր էր պատրաստում, որոնց պետք է շարունակեին և իրականացնեին մտահղացումը՝ Յա. Մուլլեյանյան, Ե. Ավետիսյան, Վ. Ավետիսյան և տողերիս հեղինակը։ Սակայն ԽՍՀՄ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի տիրապետչական սեփան և դրան հաջորդած լիսենկոյական խայտառակ կամայականությունները Ա. Թախտաջյանին ստիպեցին հեռանալ Երևանից և տեղափոխվել Լենինգրադ, ուր նա սկզբում զբաղվում էր Լենինգրադի համալսարանի կենսաբանության և հողագիտության ֆակուլտետի դեկանի, իսկ ավելի ուշ՝ Միութենական բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոններով։

Սակայն Արմեն Թախտաջյանը երբևէ չի զգաց իր կապերը Հայաստանի հետ։ Ամեն տարի, երբեմն նաև տարին երկու անգամ, այցելելով Հայաստան, նա իր աշակերտների հետ կազմակերպել էր բուսաբանական արշավախմբեր։ Ան. Ֆյոդորովի հետ համատեղելով նրա կողմնացրեց «Երևանի ֆլորայի» երկու հրատարակություն (հայերեն՝ Երևանում, ռուսերեն՝ Լենինգրադում), շարունակեց խմբագրել «Հայաստանի ֆլորան» հրատարակությունը (մինչև 1986 թվականը լույս տեսավ 8 հատոր)։ Այս շարքի 9-րդ հատորի վրա տարվող աշխատանքները համընկան մեր կյանքի ամենածանր ժամանակաշրջանի հետ։ Հատորը ընդգրկում էր 2 ընտանիք՝ զանգակաձողիկներ և բարդածղակավորներ։ Վերջինը ներառում էր տեսակներով ու ցեղերով ամառ և շատ բարդ Մյուս։ Դրանց, ինչպես և նախորդ հատորներում, պարտադիր կարգով պետք է ներկայացվեին յուրահատուկ գծանկարներով։ Ամերիկացիներ էր ելք գտնել ստեղծված վիճակից։ Նախքան առաջ անցնելը պետք է ընդգծել, որ մեր ինստիտուտի կարգաբանության բաժինը ամբողջովին համալրված էր Թախտաջյանի աշակերտներով։ Գիտական կադրերի ընտրության և պատրաստման նրա առանձնահատուկ նախաձեռնում, անսահման և մոլեռանդ սերը բնության նկատմամբ, որ նա փոխանցել էր աշակերտների մեծ մասին, ամբողջովին դրսևորվեց Հայաստանում էներգետիկ ահաբեկչության տարիներին։

Հպարտությամբ պետք է արձանագրել, որ հետխորհրդային ամբողջ տարածքում, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի դեկավար դերի փուլումից հետո, Հայաստանը եզակիներից մեկը, իսկ Կովկասում միակ համրագիտությունն էր, որ պահպանեց կարգաբանության բաժինը բարձր մակարդակով և արդյունավետ գիտական գործունեությամբ։ Եվ սա, անտարակույս, մեր մեծ ուսուցչի՝ Թախտաջյանի, վաստակի շնորհիվ է։

Էլենոորա ՉԱՐԻԵԼՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական բուսաբանական ընկերության պրեզիդենտ

Նոր թեստի շնորհիվ քաղցկեղը ախտորոշվում է ուռուցքի հայրնվելուց 5 տարի առաջ

Բրիտանացի գիտնականները նոր թեստը հնարավորություն է տալիս քաղցկեղը բացահայտել օրգանիզմում քաղցկեղային բջիջների տեսանելի հետքերի հայտնվելուց 5 տարի առաջ։ Տվյալ դեպքում օգնում են օրգանիզմի իմունային համակարգի նույնական ազդանշանները։ Լոնդոնի «Թայմս» թերթը հաղորդում է, որ նոր թեստը 15 տարի մշակել են Նոթինգեմի համալսարանի և Oncimmune գիտահետազոտական ընկերության մասնագետները։


Հետազոտության ընթացքում թեստը մշակվել է և փորձարկվել 8000 կամավորների վրա։ Ի վերջո թեստին տրվել է Early CDT-Lung անվանումը։ Նախատես այն օգտագործվել էր թոքերի քաղցկեղի ախտորոշման նպատակով՝ ռենտգենախորհրդային հետ մեկտեղ։

Թեստը պարզում է, թե իմունային համակարգը ինչպես է արձագանքում քաղցկեղային բջիջների առաջին մոլեկուլային նշաններին։ Այդ բջիջներն այսպես կոչվում են «անմոլեկուլ» կոչվող սպիտակուցային մյուսի փոքր քանակությամբ, որը իմունային համակարգին դրոշմ է արտադրել հսկայական քանակությամբ սեփական հանկամարմիններ։ Հիմա գիտնականները կարող են հետևել այդ ակտիվությանը՝ օգտագործելով հիվանդի ընդամենը 10 միլիլիտր արյունը։

Հետազոտության ղեկավար, պրոֆեսոր Ջոն Ռոբերտսոնը, որը կրծքի քաղցկեղի մասնագետ է, պատմում է. «Մեր առևանման վաղ փուլի քաղցկեղը բացահայտված էր սքանավորմամբ։ Բայց դա, այնուամենայնիվ, ուռուցքի զարգացման բավական ուշ փուլ է։ Իսկ հիմա մենք սկսում ենք քաղցկեղի առաջացումը ըմբռնել մեր լույսով՝ դիտարկելով, թե որ սպիտակուցներն են սխալ ներգործում, և ինչպես է դրան պատասխանում իմունային համակարգը»։

Ակադեմիական նոր հրապարակություններ

1. К. Арутюнян, Г. Погосян – Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941- 1945).
2. Վ. Հարությունյան, Վ. Խաչատրյան – Եզրագծային մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում։
3. Ե. Գաբրիելյան, Ա. Սեդրակյան – Դեղաբանական ու դեղագիտական տերմինների ռուսերեն-հայերեն-անգլերեն բացատրական բառարան։
4. Ա. Ասատրյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50։
5. Գեղ. Կոլեկտիվ – Երիտաւարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ մատչելի (մվիվում է Կոմիտասի ծննդյան 140-ամյա հոբելյանին)։
6. Գեղ. Կոլեկտիվ – Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում։
7. Ս. Տեր- Ավետիսյան – Հայագիտական հետազոտություններ։
8. Գեղ. Կոլեկտիվ – Modern Problems in Optics and Photonics (Proceedings of the International Advanced Research Workshop).
9. Հ. Հարությունյան – Երաժշտությունը V-XV դարերի հայ մատենագրության մեջ։
10. Է. Կանտ – Ձուտ բանականության ընմադատություններ։



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՍՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ
ԳԱՍ սփյուռքի բաժինը

ԱՐԱ ԴԱՐՁԻ

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր, Արա Վարդկեսի Դարզին (Թերզյան) ծնվել է 1960թ. մայիսի 7-ին, Իրաքի մայրաքաղաք Բաղդադում: Նրա հայրը՝ Վարդկես Դարզին, 1915թ., ցեղասպանությունից մազապուրծ, հասել էր Իրաք: Նա մասնագիտությամբ ինժեներ էր, կրթություն էր ստացել Բեռլինի համալսարանում:

Մանկության մեծ մասը Արա Դարզին անց է կացրել Իռլանդիայում՝ Դուբլինում, որտեղ էլ հաստատվել էր Թերզյանների ընտանիքը: Եվ հենց Դուբլինում էլ «Թերզյան» ազգանունը իռլանդացիների թեթև ձեռքով վերափոխվեց «Դարզին»:

Վարդկես Դարզին իր հուշերում գրում է. «Մեր ընտանիքը իսկական հայկական ընտանիք է, շատ համերաշխ ու համախմբված, և ես իմ որդուն դաստիարակել եմ հայկական ոգով»:

Արա Դարզին նախնական կրթությունը Դուբլինում ստանալուց հետո հստակ որոշեց իր մասնագիտական ուղղությունը. դա բժշկությունն էր: Մինչդեռ հայրը շատ էր ուզում ու երազում, որ որդին գնա իր հետքերով:

Արա Դարզին ստացել է բժշկական փայլուն կրթություն: Ստացել է Դուբլինի բժշկական համալսարանի վիրաբուժության ֆակուլտետի, Մեծ Բրիտանիայի վիրաբուժության արքայական համալսարանի, վիրաբուժության Ամերիկյան համալսարանի, Գլազգոյի վիրաբուժության և բժշկագիտության արքայական համալսարանի, Էդինբուրգի վիրաբուժության համալսարանի, Լոնդոնի բժշկագիտության ակադեմիայի, Արքայական տեխնոլոգիաների ակադեմիայի դիպլոմներ:

Արա Դարզին փայլեց ոչ միայն բժշկագիտության, այլ նաև ինժեներիայի ոլորտում: Դարզին գլխավորությամբ բրիտանացի մասնագետները ստեղծեցին i-Snake (ես-օձ



սաձ, առաջ իմ մտքով իսկ չէր անցնի, որ բաժինը, որը ես գլխավորում եմ, կմասնակցի ֆիլմի նկարահանմանը»:

Դարզինի հաջորդ գաղափարը, որը բժիշկների մոտ տարակարծություն առաջացրեց, «սև արկղն էր»: Նա առաջարկում էր հիվանդանոցները համալրել այնպիսի սարքերով, որոնք հիշեցնում են ինքնաթիռներում ծայնագրող «սև արկղերը»: Արա Դարզին նախագծեց այնպիսի «սև արկղ», որն արձանագրում է վիրահատարանում կատարվող յուրաքանչյուր գործողություն: Էլեկտրամագնիսային և գերմայնային սենսորները հարմարեցված են վիրաբույժի ձեռքերին, որոնք հստակ արձանագրում են նրա յուրաքանչյուր գործողություն: Դարզին կարծիքով, նման սարքավորումը առավել անվտանգ կդարձնի վիրահատությունը: Միևնույն ժամանակ, վիրահատության ընթացքում առաջացած բարդությունների դեպքում հնարավոր կլինի հեշտությամբ պարզել՝ դա եղել է բժշկի անփութության պատճառով, թե՛ մարդու օրգանիզմը ի վիճակի չի եղել դիմադրելու: Իհարկե, Դարզինի նոր գաղափարը բժիշկներին բաժանեց երկու խմբի, ոմանց գտնում էին, որ բժիշկը վիրահատարանում առանց այն էլ բավական լարված վիճակում է, և «սև արկղի» գաղափարը հավելյալ լարվածություն



են) սարքը: Այդ ռոբոտ-գործիքը երկար խողովակ է, որի մեջ տեղակայված է միկրո-շարժիչ, տվիչ և տեսադիտման սարք:

Դարզին և նրա գործընկերների հաջորդ հայտնագործությունը կոչվեց «Դա Վինչի». այն բժշկական ռոբոտ է, որն անհրաժեշտ է այնպիսի վիրահատությունների ժամանակ, ուր պահանջվում է սկալպելով (հերձադանակ) աշխատելու առավելագույն ճշգրտություն օրինակ, սրտի վիրահատության ժամանակ: «Դա Վինչի»-ին վիճակված էր հայտնի դառնալ աշխարհով մեկ. դրա մասին տեղեկությունը ներառվեց անգամ Ջեյմս Բոնդի «Մեռնել, բայց ոչ այսօր» ֆիլմում: Սցենարի համաձայն մեքենան սկանավորում է 007 գործակալի մարմինը և նմուշ վերցնում նրա արյունից: Այդ առիթով Արա Դարզին իր հարցազրույցներից մեկում ասել է. «Թե՛ վիրաբույժի և թե՛ գործակալի համար կարևոր է սառնասրտությունը և ճշտությունը, դրանով է պայմանավորված, որ երկուսն էլ օգտագործում են լավագույն տեխնոլոգիաները... Անկեղծ ա-

կառաջացնի: Այդ տեսակետը, բնականաբար, չի կիսում Դարզին՝ մատնանշելով այն փաստը, որ ավիացիայի «սև արկղերը» այդպես էլ հավելյալ սթրեսային գործոն չդարձան օդաչուների համար, թեև սկզբում նման վախեր ևս առկա էին:

Բժշկագիտության ոլորտում մեծ ներդրումների համար 2001թ. փետրվարին Արա Դարզին արժանացավ Մեծ Բրիտանիայի թագուհու հոբելյանական պարգևին, իսկ 2003թ. ստացավ Բրիտանիայի քաղաքացիություն: Լոնդոնում Արա Դարզին բժշկագիտական գործունեությունը հաջող էր ընթանում: Դարզին Միդդլսեքս կոմսության Կենտրոնական հիվանդանոցի առաջատար վիրաբույժներից մեկն էր, միևնույն ժամանակ գլխավորում էր Լոնդոնի «Արքայական քոլեջի» բժշկագիտության ֆակուլտետի վիրաբուժության ուռուցքաբանություն (օնկոլոգիա) բաժինը: Այնուհետև Արա Դարզին ստանձնեց Մեծ Բրիտանիայի կառավարությունում առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը:

2007 թ. հունիսին Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունի հրամանով Միացյալ Թագավորության ամենահայտնի վիրաբույժ, 47-ամյա պրոֆեսոր Արա Դարզին (Թերզյանը) նշանակվեց առողջապահության նախարար: Դարզին Մեծ Բրիտանիայի ողջ պատմության մեջ եղավ առաջին հայազգի նախարարը:

Նախարար դառնալով՝ Արա Դարզին չդադարեցրեց վիրաբույժի իր գործունեությունը: Որպես նախարար՝ նա աշխատում էր ընդամենը չորս օր՝ երկուշաբթիից մինչև հինգշաբթի, և վարձատրվում էր հենց այդ օրերի համար. ուրբաթ օրը վիրահատությունների օրն էր, որոնք նա անում էր հասարակական հիմունքներով՝ չվարձատրվելով դրանց համար: Կիրակի օրը Դարզին այցելում էր իր հիվանդներին: Միակ հանգստյան օրը շաբաթ օրն էր, որը նա անց էր կացնում ընտանիքի հետ, կնոջ՝ Վենդիի և երեխաների՝ Ֆրեդի ու Նինայի հետ:

Արա Դարզին իր առանձնահատուկ տեղն ունի համաշխարհային առողջապահության ոլորտում. նա առողջապահական նորագույն տեխնոլոգիաների յուրացման կենտրոնի նախագահն է, առողջապահության արդյունաբերության նպատակային խմբի, Եվրոպայի միացյալ առողջապահական խորհրդի հանձնաժողովի, Միջազգային վիրաբուժական խմբի, Բժշկագիտության ակադեմիայի, 2006 թվ.-ից՝ Արքայական ինժեներական ակադեմիայի պատվավոր անդամ:

Նրա վաստակը ըստ արժանավույն է գնահատվել Մեծ Բրիտանիայում: Նա արժանացել է բազմաթիվ պարգևների, որոնցից պետք է նշել հետևյալները.

* 2002 թ. դեկտեմբերին՝ Բարձր ասպետական մրցանակ Մեծ Բրիտանիային մատուցած ծառայությունների համար,

* 2004 թ. Համդանի մրգանակ,

* 2006 թ. Ավստրիայում տեղի ունեցած համաշխարհային մրցույթում Արտադրանքի գաղափարի հաղթող (I2P)

Նա բժշկագիտության ոլորտին նվիրված տասնյակ հոդվածների և ութ գրքի համահեղինակ է:

Հատկանշական է, որ Արա Դարզին չի ուզում մոռանալ իր արմատների մասին. նա Մեծ Բրիտանիայի կառավարության միակ նախարարն էր, ով համարձակորեն խոսում էր Ցեղասպանության մասին: Տարիներ առաջ հարցազրույցներից մեկում Արա Դարզին նշել էր. «Ես կցանկանայի այցելել Հայաստան: Եվ չնայած ես դեռ այդ հնարավորությունը չեմ ունեցել, ես հույս ունեմ, որ մոտ ապագայում ինձ դա կհաջողվի անել: Ես ցանկանում եմ վերադառնալ արմատներին: Ես աշխատել եմ շատ երկրներում, իսկ ինչո՞ւ չաշխատեմ նաև Հայաստանում: Ես կարող եմ գնալ այնտեղ որպես կամավոր և կիսվել իմ փորձով տեղի բժիշկների հետ: Ինձ պարզապես անհրաժեշտ է իրական հնարավորությունը»,- հայտարարել է Արա Դարզին: Այդպիսի հնարավորություն չուտով ընծեմվեց: 2004թ. հոկտեմբերին նա առաջին անգամ այցելեց իր պատմական հայրենիք: «Մալաթիա» բժշկական կենտրոնում հայ բժիշկների համար նա լապարասկոպիական վիրաբուժության վերաբերյալ դասախոսություն ունեցավ: Արա Դարզին մի քանի ուսուցողական վիրահատություններ էլ կատարեց, որոնց միջոցով ամբողջապես կարողացավ հաղորդել իր փորձը: Այցի ժամանակ որոշվեց «Մալաթիա» բժշկական կենտրոնում ստեղծել արդիականացված լապարասկոպիական վիրաբուժության կենտրոն:

Այսօր էլ նա ակտիվորեն համագործակցում է Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներդրման գործում:

ՀՀ ԳԱՍ-ն բարձր գնահատելով Արա Դարզինի գիտական վաստակը, ինչպես նաև Հայաստանի հետ համագործակցությունը, 2008 թ. նրան ընտրեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ: 2009թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ ԳԱՍ-ում հյուրընկալվեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Արա Դարզին, սա նրա երրորդ այցն էր հայրենիք: Նրան շնորհվեց արտասահմանյան անդամի դիպլոմ և հուշամեդալ: Արա Դարզին իր շնորհակալական ելույթում նշեց, որ ամեն ինչ անելու է՝ շարունակելու իր համագործակցությունը Հայաստանի բժիշկների հետ:


Հայաստանում գտնվել է աշխարհի ամենահին կաշվե կոշիկը

(Սկզբը՝ 1-ին էջում)


Գերմանական բազմաթիվ լրատվամիջոցներ հունիսի 10-ին իրազեկեցին, թե գիտնականները աշխարհի ամենահին կաշվե կոշիկն են գտել Հայաստանում: 37 համարի կոշիկը 5500 տարեկան է, մի քանի հարյուրամյակ ավելի հին, քան մինչ այդ հայտնաբերված «Otzi» սառած մուսիայի ոտնամանը: «Շատ ոգևորված եմ, որ նույնիսկ կոշիկի քուղն է պահպանվել», ասել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր Դիանա Սարգսյանը, որը նաև միջազգային հետազոտական մի թիմի անդամ է, որ ներկայացնում է գտածոն «PLOS One» մասնագիտական հանդեսում:

Գիտնականներից Պինհասին: Նրա կարծիքով վայոց ձորի մարզում հազարամյակների հետքեր պահպանած քարանձավը առանձնահատուկ նշանակություն է ունեցել: Նույն քարանձավում պահպանվել են նաև մանուկների գերեզմաններ: Բայց այնքան քիչ բան է հայտնի այդ ժամանակահատվածի մասին, որ վստահորեն դժվարանում ենք մեկնաբանել, թե ինչու են թվարկած բոլոր առարկաները հենց այստեղ հայտնաբերվել, ասել է Պինհասին: Հստակ է, որ Արենի-1 անունը կրող քարանձավի բազմաթիվ սենյակներում լուրջ հետազոտություններ պիտի կատարվեն:

Անահիտ ՀՈՎՍԵԾՅԱՆ



լայնությամբ կոշիկը հայտնի չէ՝ պատկանել է տղամարդու, թե՛ կնոջ: Տղամարդիկ այն ժամանակ ավելի կարճահասակ են եղել, քան այժմ: Գտածոն լավ է պահպանվել չոր և սառը պայմաններում: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում կատարված հետազոտությունները հաստատել են, որ կոշիկը Բ.ա. 3500 տարի առաջ է ստեղծվել և 1000 տարով ավելի մեծ է, քան Եգիպտոսի Գիզայի բուրգը: Կոշիկը խոզի կամ ցուլի մի կտոր կաշվից է: Գտածոյի կողքին գտնվել են նաև մի կուժ և այծի պոզեր:



Մոտավորապես 5500 տարեկան կոշիկը, որը հայտնաբերվել է Արենի-1 քարանձավում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆՌԵԱ» - 1

Ընթերցողի սեղանին է «Պատմաբանասիրական հանդեսի» այս տարվա անդրանիկ համարը, որը, ինչպես միշտ, հետաքրքիր է նյութերի բազմազանությամբ, նորահայտ եզրակացություններով, տարբեր խնդիրներին առնչվող նոր մեկնաբանություններով:

Հանդեսը «Հայոց հին մայրաքաղաքները» խորագրի ներքո հրապարակել է ժողովրդական խաչատրյանի «Վաղարշապատի հիմնադրման հարցի շուրջ» պատմաքննական հետազոտությունը: Գիտական և քննական լուրջ ուսումնասիրության հանրագումարում ժողովրդական խաչատրյանը իրավացիորեն եզրակացնում է.

«...Մինչև Դվինի մարզպանական Հայաստանի կենտրոն լինելը, Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալուց հետո, Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքի և կրոնական կենտրոնի դերը»:

Մեծ Կոմիտասի 140-ամյակին է նվիրված «Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները» լրջախոս ուսումնասիրությունը, որի հեղինակն է արվեստաբանության գլխավոր Աննա Ասատրյանը: Հեղինակը մեկ անգամ ևս հավաստում է, որ «Կոմիտասը դարակազմիկ երևույթ էր հայ երաժշտական արվեստում, հանճար, որը իր կարճատև կյանքի ընթացքում ոչ միայն մաքրեց-գտեց հայ երգն ու երաժշտությունը, այլև նախանշեց և ուղղորդեց հայ երաժշտական արվեստի հետագա զարգացումը»:

Բանասիրության գլխավոր Ալիսա Դուլխանյանի «Անի մայրաքաղաքը և Արմավանի և նրա ժամանակակիցների գնահատմամբ» հոդվածը, որը պետք է անպայման ընթերցել, հետաքրքիր գյուտ է Անի և նրա պատմությունը ժամանակակիցների աչքերով ներկայացնելու և, մասնավորապես, խաչատրյան Արմավանի և Անիի ճակատագրերում աղերսներ գտնելու և դրանք նորովի մեկնաբանելու առումով: Եվ գուր չէ, ինչպես նշում է Ա. Դուլխանյանը, որ «խաչատրյան Արմավանը իր ստեղծագործական կյանքի, ազգանվեր գործունեության հետ կապված դժվարությունները համեմատում է Անի մայրաքաղաքի հետ...»:

«Հողվածներ և հաղորդումներ» բաժնից կցանկանալից ընթերցողի ուշադրությունը բեռնել Սարգիս Հարությունյանի «Սասնա ծռեր» հերոսավեպի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին» հաղորդումը: Ամբողջականությամբ մեջ. եզրակացնում է հեղինակը. հերոսավեպը բոլոր չորս ճյուղերով վիպասացների և ուկնդիրների կողմից դիտվել և ընկալվել է իբրև էթ-

նիկական նախնիների իրական պատմություն, որի նկատմամբ գրեթե բոլոր վիպասացները տրամադրված էին մեծ ակնածանքով ու երկյուղածությամբ իրենց պատմած այդ վիպասանության վերաբերյալ և մեծ մեղք էին համարում դրա վրա իրենց կողմից որևէ հավելում կատարելը:

Վերոնշյալ բաժնի ուշագրավ հոդվածներից են Հովիկ Այվազյանի «Հալածականության գաղափարը Հովհաննես Թումանյանի պոեզիայում», Վահան Մելիքյանի «Իշխանության ազգայնացման հիմնահարցը Անդրկովկասում (1917 թ., նոյեմբեր)», Վահան Տեր-Ղևոնդյանի «Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին», Արմենուհի Ստեփանյանի «Հայրենադարձության հայկական փորձը» և ուրիշներ:

Հանդեսի «Հրապարակումները» բաժնում գետնից վաճառված են Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույսընծայման նախապատմության շուրջ (նվիրված Մկրտիչ Ներսիսյան ծննդյան 100-ամյակին) և Անուշավան Զաքարյանի «Հուշեր Դավիթ Անանունի մասին» (ծննդյան 130-ամյակի առթիվ) ուշագրավ հաղորդումները:

Հանդեսը գրախոսություններ է տպագրել Վահան Բայբուրյանի «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (Միեր Կարապետյան), Սարգիս Հարությունյանի «Հայ հնայական և ժողովրդական աղոթքները» (Տորք Դավալյան), Թովմաս Պողոսյանի «Աշուղ Ջիվանի. Անհայտ երգերը» գրքերի մասին:

Մեր երախտավորները բաժնում հանդեսը արժանին է մատուցել ակադեմիկոս Վարդգես Միքայելյանին (Անուշավան Զաքարյան) և ակադեմիկոս Ռուբեն Զարյանին (Արարատ Աղասյան):

«Լրատու» բաժնում լուրեր և հաղորդագրություններ են գետնից վաճառված ակադեմիկոս կյանքի, գիտաժողովների և միջոցառումների մասին:

Մենք փորձեցինք ընդհանուր գծերով ներկայացնել հանդեսի այս տարվա անդրանիկ համարում ամփոփված նյութերը, ուշադրություն հրավիրել, մեր կարծիքով, առավել ուշագրավ հրապարակումների վրա: Սակայն, քանի որ մեր մոտեցումը անպայման պետք է որ սուբյեկտիվ լինի, խորհուրդ ենք տալիս ձեռք բերել հանդեսը և անպայման կարդալ: Վստահեցնում ենք՝ այնտեղ դուք ընթերցելու առատ և հետաքրքիր նյութեր կգտնեք:

ԴԱՐԻ ԿԱՌՈՒՅՑԸ

Հարցադրման կարգով

Հայ ժողովուրդն իր բազմադարյան գոյության ընթացքում աչքի է ընկել ոչ միայն հսկայական բերքեր, հոյակապ եկեղեցիներ, ժանյակազարդ խաչքարեր, երկարածիգ ջրանցքներ ու կանաչազարդ տարածքներ հիմնելով, այլև ջրամբարներ կանոցելով, ու արևաշատ Հայաստանի կլիման մեղմացնելու, մեր երկրի բնությունը հարստացնելու ու գեղեցկացնելու օգտակար այլ գործերով:

Համաշխարհային կլիմայի փոփոխումը ու գլոբալ տաքացումը այսօր հրատապ խնդիրներից են ողջ մարդկության համար և առավել ևս սակավաջուր պաշարներ ունեցող մեր հանրապետության համար:

Ազրարային քաղաքականության արդի էտապում և ապագայում, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու կատարելագործման, մեր հանրապետության պարենային ռեսուրսների անվտանգության ապահովման գործում առաջնայինը համարվում է ջրային պաշարների կուտակումը ու պահպանումը, նրա արդյունավետ օգտագործումը, նոր ջրամբարների նախագծումն ու կառուցումը:

Գոտիական կլիմայափոփոխությանը և անապատացմանը դիմակայելու համար անհրաժեշտ է ընդունել միասնական ծրագիր, պետական մտածելակերպ ու աջակցություն, համընդհանուր ուժերով պայքարելու սպասվելիք արհավիրքի դեմ:

Դրա համար անհրաժեշտ է այժմվանից զբաղվել ջրային նոր պաշարների կուտակման և պահպանմանը նոր բուսատեսակների ստեղծման, կենդանիների բուծման ու պաշտպանական ծառաշերտերի տնկման աշխատանքների կատարմամբ:

Առաջարկվող հիմնախնդիրը կյանքի կոչելու համար, կարծում ենք, հրամայական պահանջ է նախագծելու ու կառուցելու «Արմավիր» անունը կրող ջրամբար: Մեր համոզմամբ 400-500 մլն մ³ տարողությամբ «Արմավիր» ջրամբարը նպատակահարմար է նախագծել ու կառուցել նախկին Թալինի, Աշտարակի, Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջանների սահմանային հատվածում:

Ջրամբարի սնման աղբյուրը լինելու է ամենակայուն ջրային ռեզիվ ունեցող Մեծամոր (Սև ծով) գետը, որի տարեկան հոսքը կազմում է շուրջ 1050 մլն մ³: Եթե կասպիական նավթը հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա բազմաթիվ հզոր պոմպակայանների միջոցով հասնում է Եվրոպա, իսկ ինչու չի կարելի ընդամենը 15 կմ հեռավորության վրա մեծ պոմպակայանի օգնությամբ ջուրը մղել դեպի ջրամբար:

«Արմավիր» ջրամբարի նախագծման, կառուցման ու շահագործման դեպքում, մոտ ապագայում հնարավոր կլինի ոռոգելի դարձնել նաև շրջակա կիսանապատային նոր հողեր, ինչպես նաև ապահովել հազարավոր հեկտարներ հողերի ոռոգումը Արարատյան դաշտավայրում: Բացի այդ, այն դրականորեն կազդի շրջակա միջավայրի կլիմայի վրա, կհարստանա բուսական և կենդանական աշխարհը, հնարավորություն կստեղծվի զարգացնելու ձկնաբուծությունը, կբացվեն նոր աշխատատեղեր և միաժամանակ լավագույն հանգստի գոտի կլինի ազգաբնակչության համար:

Այսօրվա դրությամբ արաբական երկրներից Սիրիան և Իրաքը դիվանագիտական պատերազմի մեջ են իրենց հարևան Թուրքիայի հետ: Բանը նրանում է, որ Թուրքիան Եփրատ և Տիգրիս գետերի վրա կառուցել է խոշոր ջրամբարներ, որի հետևանքով Իրաքում 1,5 մլն, իսկ Սիրիայում 0,6 մլն հեկտար ցանքատարածություններ մնացել են անջրդի և չորանում են: Նույնը տարիներ հետո, հնարավոր է, որ կատարվի մեր հանրապետության հետ, և Արարատյան դաշտավայրը վերածվի անապատի:

Տեղեկություններ կան այն մասին, որ Թուրքիան ներկայումս իր տարածքում, Արաքս գետի վրա նախատեսել է կառուցել է խոշոր ջրամբար, հետևաբար «Արմավիր» ջրամբարի կառուցումը կյանքի պահանջ է:

Դարի կառույց համարվող «Արմավիր» ջրամբարը նախագծելու ու կառուցելու համար անհրաժեշտ է պետական մտածելակերպ և աջակցություն: Անհրաժեշտ է փնտրել բարեգործներ ինչպես մեր երկրում, այնպես էլ Սփյուռքում, կազմակերպել բարեգործական դրամահավաքներ, հիմնել «Արմավիր» հիմնադրամ և ազգովի կառուցել կենսական նշանակություն ունեցող այդ ջրամբարը:

Մեր պատկերացմամբ, եթե կառուցվող ջրամբարի հատվածը իր շրջակա տարածքով անտառապատվի, կանաչապատվի, կանաչ շինարարության տեսակետից կլինի եզակի համալիր իր աշխարհագրական դիրքով, հյուրանոցային համալիրներով, բազմաքանակ բլրակներով ու ձորակներով:


Հարազատ բնության կանաչապատման ու ջրամբարի կառուցման և շահագործման խնդիրը լուծելու համար յուրաքանչյուր հայից պահանջվում է հոգատար վերաբերմունք և պատասխանատվություն՝ ոչ միայն այսօրվա, այլ նաև պատասխանատվություն հետագա սերունդների առջև, որոնց պարտավոր ենք թողնել ավելի շատ բնական հարստություններ, քան ստացել ենք մեր նախորդներից:

Մինչև երբ պետք է հայոց գետերը հոսեն մեր երկրով և օտար պետության բարիք դառնան: Սա կենսական խնդիր է մեզ համար և ժամանակի հրամայական:

Էդվարդ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ հանրային խորհրդի գյուղատնտեսության և բնապահպանական հանձնաժողովի անդամ

Գիտնականները խորհուրդ են տալիս



Աշխարհի բոլոր երկրները մշտապես ձգտել ու ձգտում են ունենալ զարգացած գյուղատնտեսություն՝ առաջին հերթին ապահովելու սեփական պարենային անվտանգությունը ու անվտանգությունը:

Բարձր արդյունավետ գյուղատնտեսության բնորոշ և անհրաժեշտ բաղադրիչներն են՝ հանքային պարարտանյութերը, պեստիցիդները, բարձր արդյունավետություն ունեցող բուսականությունն ու կենդանական տեսակները, էներգատար մեխանիզմները, ոռոգումը, չորացումը և այլն:

Գյուղատնտեսության ինտենսիվացումը միաժամանակ նպաստում է միջավայրի տեխնոգեն աղտոտվածության ավելացմանը և սննդամթերքների մեջ վտանգավոր միացությունների մնացորդային քանակությունների զգալի կուտակմանը:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը, պարարտանյութերի համաշխարհային արտադրությունը կայունացվեց՝ ելնելով բույսի սննդանյութերի նորմատիվային պահանջներից և հասցվեց տարեկան մոտ 150 մլն. տոննայի (100% ազոտը նյութի հաշվով) և պեստիցիդների քանակը՝ տարեկան 45 մլն. տոննայի: Այնուամենայնիվ, այդ երկրներից շատերում հրատապ խնդիր է դարձել գյուղատնտեսության վարման համակարգի այլընտրանքային կամ օրգանական համակարգին անցնելու անհրաժեշտությունը, որը կնպաստի գյուղմթերքներում մարդու համար վնասակար նյութերի բացառմանը կամ գոնե նվազագույնի հասցնելու:

Այստեղից պետք է եզրակացնել, որ այլընտրանքային գյուղատնտեսությունը պետք է զարգանա օրգանական, կենսադինամիկ, օրգանակենսաբանական և այլ ուղղություներով, որոնք պետք է ապահովեն հողի բերրության պահպանության, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և էկոլոգիապես մաքուր սննդամթերքների արտադրության հիմնախնդիրները:

Հարկ է նշել, որ արդեն 20 տարի է, ինչ մեր հանրապետության գյուղատնտեսությունը հայտնվել է էքստենսիվ

վարման համակարգում, որը հենց այն համակարգն է, որտեղ չի իրականացվում գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումներ, իսկառ բացակայում են ցանքաշրջանառությունների կիրառումը, հողերում բացակայում է կամ նվազագույնի է հասել հումուսի պարունակությունը ու սննդարար մյուս տարրերի հավասարակշռությունը:

Հողերը գրեթե չեն պարարտացվում օրգանական պարարտանյութերով (գոմաղբ, թռչնաղբ), անասնապահության հետադարձ կապը երկրագործության հետ չի իրականացվում, չկա կանաչ պարարտացում: Տարվա կտրվածքով մոտ 30-40 հազար տոննա ազոտական պարարտանյութի միակողմանի օգտագործումն ու պեստիցիդների չափաքանակների կամայական բարձրացումը (ժամկետանց լինելու պատճառով) առաջացնում են էկոլոգիական լարվածություն: Այլ խոսքով, Հայաստանի գյուղատնտեսության ներկայիս էքստենսիվ վարման մակարդակը բացասաբար է անդրադառնում հողի բերրության բարձրացման, հողում սննդարարների հավասարաչափ բաշխման և մշակաբույսերի բարձր բերքի ապահովման վրա:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու, հողերի բեր-

րատի կիրառման դեպքում այն իրականանում է 1-2 ամսում: «Բայկալ ՅՄ-1» կոմպոստի բաղադրության հիմնական մասը օրգանական ծագում ունեցող մնացորդներն են՝ մուխտեր, ծղոտ, թեփ, ծառերի տերևներ և այլն, որոնք անսպառ են և արժեք չունեցող: Այս եղանակով պատրաստված կոմպոստի սննդարարությունը կարող է լինել տարբեր՝ կախված բաղադրիչների կազմից:

«Բայկալ ՅՄ-1»-ի պրեպարատը վաճառվում է 30-40 գրամանոց տուփիկներով: Որպեսզի այն բերվի բանվորական լուծույթի վիճակի, անհրաժեշտ է 3 լիտրանոց ապակե տարայի մեջ լցնել քլոր չպարունակող եռացրած ու սառեցրած (20-30°C) ջուր, ավելացնել 250 գր. մուրաբայի մնացորդ կամ ուղղակի մաքուր հյութ, խառնել, ավելացնել «Բայկալ ՅՄ-1» պրեպարատի ողջ զանգվածն ու նորից խառնել: Տարայի ջուրը հասցնել մինչև բերանը, փակել և պահել մութ տեղում (20-30°C պայմաններում): Պատրաստման 3-րդ օրվանից սկսած, օրը 1 անգամ բացել՝ առաջացած գազերը հեռացնելու համար: Սեկ շաբաթ հետո լուծույթը պատրաստ կլինի օգտագործման համար:

ՅՄ-1 կոմպոստի պատրաստման համար կուտակված ողջ բուսական զանգվածին խառնել 10%-ի չափով հող,

Բիոպարարտանյութը գյուղատնտեսության էկոլոգացման հիմնական միջոց

րության բարձրացման, մշակաբույսերի բերքատվության ավելացման և էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրության գործում մեծ նպաստ կարող է բերել «Բայկալ ՅՄ-1»-ի խառնուրդով պատրաստած կոմպոստը, որը հանրապետության ամբողջ տարածքում կարող է դառնալ օրգանական պարարտանյութերի պակասը լրացնելու ամենաարագ, էժան և լավագույն միջոցը: «Բայկալ ՅՄ-1»-ը կաթնաթթվային, ֆոտոսինթեզող, ազոտ ֆիքսող մանրէների, դրոմենների, ակտինոմիցիդների, տարբեր տեսակի սնկերի շտամի համալիր է:

Գիտական աշխարհին վաղուց հայտնի էր, որ միկրոօրգանիզմների կենսագործունեության շնորհիվ է, որ կարելի է փոխել հողում ընթացող կենսաքիմիական պրոցեսները: 1988 թ. ճապոնացի գիտնական Տեռուո Նիզիմի հաջողվեց հողում գոյություն ունեցող շուրջ 3000 տեսակի մանրէներից ընտրել դրական ազդեցության մանրէներ, որոնց անվանեց «արդյունավետ միկրոօրգանիզմներ»: Նա դրանք համատեղեց մեկ ընդհանուր լուծույթի մեջ, որի կիրառումը հիմք դարձավ արդյունավետ և էկոլոգիապես մաքուր երկրագործության համար: Դրանից 10 տարի անց ռուս գիտնական Պ. Ա. Շաբլինին հաջողվեց ստեղծել այդ պրեպարատի մեկ այլ տարբերակը, որը ոչնչով չէր զիջում ճապոնականին: Պ. Ա. Շաբլինը իր պրեպարատը անվանեց «Բայկալ ՅՄ-1»-ի, որի կիրառման շրջանակները բավականին լայն են: Այն օգտագործվում է ժողտնտեսության տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսության (բոլոր ոլորտներում), բժշկության, սննդի արդյունաբերության մեջ և այլն: Բուսաբուծության ոլորտում այն օգտագործվում է՝ ա) կոմպոստ պատրաստելու, բ) սերմերի նախնական մշակման, գ) բույսերի արտաքին տալիս սրսկման, դ) ամմիջապես հող մտցնելու և այլ եղանակներով:

«Բայկալ ՅՄ-1»-ի առավելությունը նրանում է, որ եթե սովորական պայմաններում բնական մնացորդների կոմպոստացումը տևում է տարիներ, ապա այս պրեպար-

20%-ի չափով օրգանական պարարտանյութ (գոմաղբ կամ թռչնաղբ) և լավ խառնել: Խառնելու ընթացքում այն սրսկել «Բայկալ ՅՄ-1»-ի լուծույթով (1:100 հարաբերությամբ, այսինքն 100 լ. ջրին խառնել 1 լիտր լուծույթ), ապա ողջ զանգվածը ծածկել պոլիէթիլենային թաղանթով:

Շաբաթը մեկ անգամ բացել, զանգվածը խառնել և նորից ծածկել: Երկու ամիս հետո այն պատրաստ կլինի օգտագործման: Այսպիսով կարճ ժամանակում հանձնես այս կոմպոստի մեջ կուտակված չափազանց էժան և անփոխարինելի օրգանական պարարտանյութ:

Բայկալ ՅՄ-1 տեխնոլոգիայի առանձնահատկությունները.

1. Արագացում է բույսերի աճն ու զարգացումը.
2. Արագացում է պտղի հասունացումը.
3. Վերականգնում է հողի բնական բերրությունը.
4. Վերացնում է հողում եղած թունավոր տարրերի պարունակությունը և կանխում վնասատուների և հիվանդությունների զարգացումը.
5. Բարելավում է արտադրված մթերքների համային հատկությունները և զգալիորեն բարձրացնում դրանց սննդարարությունը.
6. 1 լիտր ՅՄ-1 պրեպարատի էքստրակտը բավարարում է 1 տոննա կոմպոստ ստանալու համար, որը համարժեք է 5 տոննա օրգանական պարարտանյութի (գոմաղբ).
7. Չզալիորեն երկարացվում է պտղի բնական պահպանման ժամկետները:

Գյուղմթերքների արտադրությամբ զբաղվող մեր հայրենակիցներին խորհուրդ ենք տալիս օգտագործել այս կենսապարարտանյութը. էկոլոգիական մաքրությունը և բերքատվությունը երաշխավորված է:

Մարատ ՀԱԿՈԲՅԱՆ
Գյուղ. գիտությունների թեկնածու
Աշոտ ՆԱԶԱՐՅԱՆ
Գյուղ. գիտությունների թեկնածու

Մեր առողջությունը կախված է մեր շնչած օդից

- Շրջակա միջավայրի պահպանման վիճահարույց և հաճախ քաղաքականացված խնդիրները, ինչպիսիք են ջերմոցային գազերի, ավտոմոբիլային արտանետումների և էներգիայի անվտանգության վերաբերյալ հարցերը, շատ հաճախ ստվերում են խնդրի մյուս կողմը՝ կեղտոտ օդ շնչելու վնասակար ազդեցությունը մարդկանց առողջության վրա, - գրում է Սառա Բալդոբը «U. S. News and World Report» պարբերականի ապրիլյան համարում զետեղված իր «Օդի վերաբերյալ կեղտոտ ճշմարտությունը» հոդվածում, որտեղ խոսվում է մթնոլորտի կեխտոտվածության և սրտանոթային հիվանդությունների, գիրության և պտղաբերության անմիջական կապերի մասին:


- Գիտնականներն անընդհատ նոր փաստեր են հայտնաբերում, որ մարդկանց շնչած օդի որակը նշանակալի ազդեցություն ունի նրանց առողջության վրա, - գրում է նա: Գործարանների, ավտոմեքենաների, ատոմակայանների և այլ սարքավորումների արտանետած քիմիական տարրերը մթնոլորտում գտնվող այլ տարրերի հետ միախառնվելով չափազանց վտանգավոր սպառնալիք են առաջացնում մարդկանց շնչառական օրգանների համար:

Կեղտոտված օդի չափազանց փոքր, «գերմուրք» տարրերը, որոնք մարդկային մազի մեկ երեսուներորդ «հաստությունը» ունեն, խրոնիկական խոչընդոտներ են առաջացնում շնչառական օրգաններում՝ պատճառ դառնալով ասթմայի, թոքերի քաղցկեղի և այլ հիվանդությունների զարգացման:

Բայց դա չէ բոլորը: «Սիրտն ու թոքերը, առաջնայինը լինելով, միակը չեն, որ ազդվում են», նշում է Լուիզիանայի համալսարանի գիտաշխատող Արունի Բիտոնգա: Գեր մարդիկ, նյարդային և շաքարախտի հիվանդություններով տառապողները, արյան ճնշման տատանումներ ունեցողները, հղի կանայք և այլն, անկախ տարիքից, առավել շատ են ազդվում օդի կեղտոտվածությունից:

Ըստ վերջին հայտնագործումների, օդի՝ կեղտոտվածությունը նաև բացասաբար է ազդում պտղաբերության վրա՝ առաջացնելով վաղաժամ ծննդաբերություն և վիժումներ:

Գիտնականները եզրակացնում են, որ տնտեսական ճգնաժամը չպետք է խոչընդոտի օդի կեղտոտվածության դեմ պայքարելուն, որովհետև մարդկային կյանքն ի վերջո ավելի թանկ արժե, քան որևէ այլ բան: «Մեր առողջությունը կախված է մեր շնչած օդից», ասում են նրանք:



Ամառը եկավ. Ճանաչի՛ր թշնամուդ

Ամառը տարվա դավադիր եղանակն է, եղի՛ր զգույշ և հաճախ լվա ձեռքերդ: Ըստ որում՝ օճառով:

Աղիքային հիվանդություններով մարդիկ հիվանդանում են հատկապես ամռանը: Դա պայմանավորված է նաև նրանով, որ ամառը մենք շատ ենք հեղուկ ընդունում, որի հետևանքով ստամոքսաղիակը, որը ոչնչացնում է վնասակար միկրոօրգանիզմը, թուլանում է և չի կարողանում կատարել իր խնդիրը:

Աղիքային հիվանդությունների հարուցիչները կարող են լինել բակտերիաները (սալմոնելոզ, դիզենտերիա, խոլերա), ինչպես նաև սրանց տոկսինը (բուտուլիզմ): Հիվանդներից և վարակակիցներից միկրոօրգանիզմները արտաքին միջավայր են մտնում արտաթորանքի, փսխուկի, երբեմն նաև մեզի միջոցով: Աղիքային վարակների հարուցիչները գործնականում չափազանց կենսունակ են: Դրանք ընդունակ են երկար ժամանակ գոյատևել հողում, ջրի մեջ և անգամ տարբեր առարկաների վրա: Օրինակ, գդալների, փսխանքների, դռների բռնակների և կահույքի վրա: Նրանք ախազ սկսում են բազմանալ կաթնամթերքների, աղացած մսի և ջրի մեջ (հատկապես ամռանը):

Ինչպե՛ս ճանաչել վարակը

Հարուցիչները մարդկային օրգանիզմ են ընկնում սննդամթերքի, ջրի հետ, ինչպես նաև կեղտոտ ձեռքերի միջոցով: Օրինակ, դիզենտերիան կարող է սկսվել, երբ խմես ծորակի ջուրը, չեռացրած կաթը կամ սրանից պատրաստված թթվասերը, կաթնաշոռը: Աղիքային ցուպիկը կարելի է կուլ տալ մածուկի կամ յոգուրտի հետ: Ստաֆիլակոկային վարակակիրը իրեն հրաշալի է զգում հնացած թխվածքների կրեմային զանգվածի մեջ:

Սալմոնելոզի հարուցիչները (իսկ դրանց տեսակները հասնում են 400-ի) մարդու օրգանիզմում թափանցելուց հետո ընկնում է ախորժակը, կարող է ցավել գլուխը կամ բարձրանալ ջերմությունը: Արտաքուստ կարող է թվալ, թե մարդը թունավորվել է կամ ուժեղ մրսած է: «Սարսափելի բան չկա, մի քանի հաբ ասպիրին կուլ կտամ կամ ակտիվացված ածուխ և կանցնի», - մտածում է մարդը:

Սակայն հիվանդը խաբկանքի մեջ է, նրա ջանքերն իզուր են անցնում, և սպասված արագ ապաքինումը ուշանում է և ուշանում: Ավելին, նրա վիճակն ավելի է վատթարանում, սրտխառնուք և փսխուք, ստամոքսի ուժեղ ցավեր,

լուծ (ամենավատքար դրսևորումներով): Երբեմն նաև ծարավ և դող:

Այս պարագայում շատ կարևոր է աղիքային վարակը տարբերել նման ախտանշաններով այլ հիվանդություններից՝ ոչ բակտերիալ սննդային թունավորում (օրինակ՝ դեղորայքով), կույր աղիքի սուր բորբոքում, սրտամկանի ինֆարկտ, թոքաբորբ և այլն:

Ահա այս պատճառով վերը նշված նշանները երևալուն պես չպետք է հապաղել, անմիջապես դիմեք բժշկի: Իսկ երբ վիճակը սրընթաց վատթարանում է՝ պետք է «շտապօգնություն» կանչել: Այլ խոսքով՝ կյանքը վտանգել չի կարելի:

Սուր աղիքային վարակիչ հիվանդություններից ապահովված լինելու համար (մանավանդ ամռանը) ընդամենը պետք է պահպանել ոչ բարդ և շատ սովորական կանոններ՝ կաթը և ջուրը խմել եռացնելուց հետո, բանջարեղենը և մրգերը ուտել միայն լավ, հոսող ջրի տակ լվանալուց հետո, հին, ժամանակն անցած սննդամթերքը չուտել, ուտելուց առաջ անպայման լվանալ ձեռքերը:

Այսինքն կանոններ, որ վայրենությունից դուրս եկած մարդը կիրառում է հազարավոր տարիներ: Իսկ եթե կան դեռ վայրենիներ՝ մեղքն իրենց վիզը:

ՀԵՏԱԶԵՐՈՒՍԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուժեղ երկրաշարժերը կարելի է կանխապես պնդում են թայվանցի գիտնականները

Խոշոր երկրաշարժերը հնարավոր է մի քանի օր առաջ կանխատեսել ապագա բնական աղետի շրջանի օդի բաղադրությունից: Այդ հետևություններն են հանգել Տայվայի համալսարանի մի խումբ գիտնականների՝ պրոֆեսոր Շի Չեն Ուսուի գլխավորությամբ:

Երկրաշարժի ժամանակ և դրա նախորդին օդի բաղադրության փոփոխությունները վերլուծելով՝ թայվանցի մասնագետները պարզել են, որ առաջին ստորագետնյա ցնցումներից մի քանի ժամ առաջ մթնոլորտում անսպասելիորեն աճում է ծծմբի երկօքսիդի խտությունը: BBC-ն նշում է, որ գիտնականներն առայժմ չեն կարողանում բացատրել տվյալ երևույթի պատճառը: Այդուհանդերձ, նրանք սկսել են ստեղծել հատուկ սարքեր, որոնք երկրաշարժից առաջ ինքնաբերաբար տազանալ կինչեցնեն մթնոլորտի քիմիական բաղադրության վերլուծության հիման վրա:

Էլեկտրական արդուկ՝ կապալիզատորով

Լիոնի (Ֆրանսիա) կառավարիչ ուսումնասիրման ինստիտուտի աշխատակիցները վերջերս էլեկտրական արդուկի համար արտոնագիր են ստացել: Արդուկը, որի հիմնային մասը պատաս է կատալիզատորով՝ պալլադիումով, օգտագործումից հետո երբեք մաքրման կարիք չի զգում: Բանը նրանումն է, որ արդուկը միացնելիս արդուկի հիմնային մասին կպած հետքերն օքսիդանում են՝ ածխածնաթթվածնային գազի և գոլորշու տեսքով:

Ֆրանսիական ֆիրմաներից մեկն արդեն մտադիր է արտադրել ինքնամաքրվող արդուկներ: Այն հարցին, թե որքան կարծեման նման արդուկները, ոչ ոք չի կարող պատասխանել, քանի որ պալլադիումը պատկանում է պլատինի խմբի քանկարծեք մետաղների թվին: Մյուս կողմից էլ համոզված չեն, որ նման ջերմաստիճանի և մթնոլորտային ճնշման դեպքում պալլադիումի կատալիզատորը արդյունավետ կարող է լինել:

Հավի արգանակն ընդդեմ արյան բարձր ճնշման

Հիրոսիմայի (Ճապոնիա) համալսարանի ֆիզիոլոգները գտել են, որ հավի արգանակն իջեցնում է արյան ճնշումը: Ընդ որում բուժիչ նպատակով ցանկալի է, որ արգանակը պատրաստված լինի ոչ թե հավի սպիտակ մսից, այլ՝ կամ ամբողջական հավի մսից, կամ էլ՝ ոտքերից ու թաթերից: Պարզվել է, որ, հատկապես, այս մասերի կոճիկներն ու անոթներն են պարունակում պեպտիդներ՝ ընդունակ կանգնեցնելու հորմոնների ազդեցությունը, քանի որ հորմոններն են պատասխանատու անոթների նեղացման և, դրա հետ կապված, արյան ճնշման բարձրացման համար: Իսկ նրանք, որոնք չեն սիրում հավի մսից պատրաստված արգանակ, ըստ հեղինակների կարծիքի, կարող են օգտագործել հացահատիկ, սոյա, սաղմոնի միս և թթված կաթ, որոնք նույնպես ունեն նույն հատկությունները, ինչ որ հավի մսի արգանակը:

Այս օրին՝ ԱՄԵՆԱՇՈՐԳԸ

Համաշխարհային կլիմայի փոփոխություններով զբաղվող հետազոտողների կանխատեսումներն այլընտրանք չեն: Պարզվում է 2010 թվականը երկիր մոլորակի պատմության մեջ ամենաշոգն է լինելու: Իսկ դա հանգեցնելու է բազմաթիվ բնական աղետների: Գիտնականները հայտնում են, որ Արկտիկայի սառույցների մակարդակը տարվա այս եղանակի համար կրիտիկական շեմի է իջել: Ամեն օր 40 հազար ք/կմ սառույց է անհետանում: Վաշինգտոնի հետազոտողները տեղեկացնում են, որ ծովային սառույցների ծավալը 38 տոկոսով պակաս է 1978 թվականի ծավալներից, երբ գիտնականներն առաջին անգամ արձանագրեցին, որ սառույցները հալվում են:



ԱՄԵՆԱԹԱՆԿ ԴԵՂԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

«Fords» ամսագիրը հրապարակել է ամենաթանկ դեղերի ցանկը: Աշխարհում ամենաթանկ դեղամիջոց է ճանաչվել Alexsion Pharmaceutical ընկերության Solaris դեղը: Այդ դեղամիջոցով բուժման տարեկան կուրսն արժե 409 հազար դոլար:

Solaris-ը օգնում է իմանալին համակարգի խիստ հազվադեպ խանգարումներով տառապող մարդկանց (երբ քնած ժամանակ արյան կարմիր

գնդիկները անհետանում են): Այն շուկայում հայտնվել է երեք տարի առաջ: Համաձայն ամսագրի, ԱՄՆ-ում նման հիվանդությամբ տառապող և Solaris օգտագործողների թիվը 8000 է: Այդ երկրում ևս 500 մարդ տառապում է «Համբերի սինդրոմ» անվամբ հայտնի գենետիկ հիվանդությամբ: Նրանց համար նախատեսված Elaprase դեղամիջոցով բուժման տարեկան կուրսն արժե 375 հազար դոլար:

Հազվագյուտ դեղամիջոց է նաև BioMarin Pharmaceutical ընկերության Naglazyme-ը, որը նշանակվում է մետաբոլիզմով տառապողներին: Բուժման տարեկան կուրսն արժե 365 հազար դոլար: Ընդհանուր առմամբ, Fords-ի՝ ամենաթանկ դեղամիջոցների ցանկում ընդգրկված է ինը անուն դեղ, որոնցից յուրաքանչյուրով բուժման տարեկան կուրսն արժե ավելի քան 200 հազար դոլար:

Գ ի յ ո յ թ յ ո յ ն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱՐԵԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Սպորտագրված է փապագրության՝ 23.06.2010 թ.:

"ГИТУТЮН" ("Hayka")
газета НАН РА